Հավելված
Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2025 թվականի մարտի 04-ի N 022-Ն հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի տնօրենի ուսումնական գծով տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

N	Թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը)
1	2	3	4	5
1.	**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի (1.0դրույք)**	**1) Որակավորման պահանջները՝ հաստատության մեթոդիստի,տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝** բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ: **2) Ընդհանրական պահանջները**. Մեթոդիստի՝տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է 1)տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին 2)իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. ա.Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին»,,Հանրակրթության մասին..,«Նախադպրոցական կրթության մասին»,,,Լեզվի մասին..,,,Երեխայի իրավունքների մասին..,,,Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին..,,,Լիցենզավորման մասին..,,,Տեսչական մարմինների մասին..,,,Տեղական ինքնակառավարման մասին..,,Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին.. օրենքները ,Հայաստանի Հանրապետության աշխատանքային	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:	1)դիմում (Ձև 1). 2)անձը հաստատող փաստաթուղթ. 3)կրթության մասին փաստաթուղթ. 4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում). 5)ինքնակենսագրություն. 6)մեկ լուսանկար՝3x4 չափի. 7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

		օրենսգիրքը,«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը. բ.մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին; Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի տնօրենի ուսումնական գծով տեղակալի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցույթային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները;		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**
Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**			**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2025 թվականի ապրիլի 04–ին, ժամը՝ 11;00	**Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 077414578): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբեր 2024 թվական N1981 - Ա/2 հրաման): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:**			**2025 թվականի մարտի31-ը ներառյալ:**